Ակներ գյուղ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 69 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 4 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ,
Կարգավիճակը՝ լեռնային:
Գտնվում է Գորիս քաղաքի հյուսիս-արևմտյան մասում, Վարարակ (Գորիս) գետի ափին, հիմնադրվել է 1880թ.:
Ակները 1958-90թթ. գտնվում էր Վերիշենի պետական տնտեսության կազմում: Գյուղի մոտով է հոսում «Տերտերի առու» կոչվող ջրանցքը, որը կառուցված էր դեռևս 10-րդ դարում: Գյուղի տարածքում կան կիկլոպյան կառույցների, միջնադարյան բերդի ու այլ շինությունների հետքեր:
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 334 գյուղացիական տնտեսություն:
Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 3952 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3733 հա, որից՝
- վարելահող՝ 21 հա, խոտհարք՝ 178 հա, արոտ՝ 2496 հա, այլ հողատեսք՝1039 հա
- բնակավայրերի հողեր՝ 72 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 7 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝2 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր՝ 130 հա, որից անտառածածկ՝ 129 հա
- ջրային հողեր՝ 7 հա